ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ

ՍՐԲԱԼՈՒՅՍ ՄՅՈՒՌՈՆ

(ԿԱՆՈՆԱՅՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ, ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԸ)

ԿԱՆՈՆԱՅՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցում Սրբալույս Մյուռոնի օրհնության իրավունքը վերապահված է Ամենայն Հայոց Կաթողիկոսին: Մեծի Տանը Կիլիկիո Կաթողիկոսի, ինչպես նաև ժամանակի Աղվանից և Աղթամարի կաթողիկոսների օրհնած Մյուռոնը բաշխվել է միայն նրանց իրավասության ներքո գտնվող թեմերին:

Որ մեր Եկեղեցու պատմության առաջին իսկ դարերից Սրբալույս Մյուռոնն օրհնելու իրավունքը բացառապես Հայոց Հայրապետն է ունեցել և օրհնության կանոնը էլ ու պատրաստության համար գործածվող նյութերն էլ համընկնում են դարերի ընթացքում ամբողջացած կանոնին, վկայում են պատմական ու ձեռագրական հիշատակությունները:

Այսպես 604 թ., երբ մահանում է ծերունազարդ Մովսես Բ Եղիվարդեցին՝ գահակալել է /574-604/, կաթողիկոսական գահը երեք տարի թափուր է մնում: 607 թ. գումարված ժողովում նոր հայրապետ է ընտրվում Աբրահամ Ա Աղբաթանեցին /607-615/: Մովսես կաթողիկոսի մահից հետո Մյուռոն չէր օրհնվել և Վրթանես վարդապետի տեղապահության օրոք եկեղեցիներին բաժանվել էր վախճանված կաթողիկոսի օրոք օրհնված Մյուռոնը: Աբրահամ Ա Աղբաթանեցին, ընտրությունից անմիջապես հետո, փառաշուք հանդիսությամբ կատարում է Մյուռոնի օրհնությունն և հաջորդ օրը բաշխում հավաքված հոգևորականներին, և նրանք այն տանում են իրենց հովվության ներքո գտնվող վիճակները[1]:

Երիցս կարևորվում է Ուխտանեսի «Պատմությամբ» վկայված այս դրվագը: Նախ, որ ասվում է, թե եպիսկոպոսները և կաթողիկոսական տեղապահը գործածում են միայն հանգուցյալ կաթողիկոսի օրհնած մյուռոնը, իսկ նոր օրհնությունը կատարում է նոր ընտրված հայրապետը: Երկրորդ՝ օրհնության նկարագրությունը, թե նախ Վրթանես տեղապահը «իղազործաց արուեստի» համաձայն նախօրոք պատրաստել էր «Օծութեան իտը», որը գիշերային հակումից և պաշտոն կատարելուց հետո, օրհնվեց հաջորդ օրը, իր ընթացքով համապատասխանում է օրհնության ավանդական կանոնին: Եվ վերջապես երրորդ՝ մյուռոնի այս օրհնությունը առանձնակի խորհուրդ ուներ. նորընտիր հայրապետի առջև Հայ Եկեղեցում տրված հավատարմության իրենց ուխտը վերահաստատեցին այն հոգևորականները, ովքեր արտաքին ճնշումների պատճառով առժամանակ ենթարկվել էին բյուզանդական ազդեցությանը և օրհնության հաջորդ օրը, գնալով իրենց թեմերը, հայոց կաթողիկոսանիստ կենտրոնից տարան և Ս. Մեռոնը: Սա առաջին նվիրական վկայությունն է մի քանի կայսրությունների միջև բաժան-

---

[1] *Տե՛ս Ուխտանես եպիսկոպոս, «Պատմութիւն Հայոց», Վաղարշապատ, 1881, էջ 67:*

բաժան եղած և տարբեր գաղթավայրերում ցրված հայ ժողովրդի սրբալույս մյուռոնով մեկտեղվելու և հոգևոր միաձույլ մի ամբողջություն դառնալու, որը հետագայում բազմիցս շեշտվելու էր թե՛ մեր հայրապետների և թե՛ մատենագիրների կողմից:

Որ մյուռոնի օրհնությունը կարող է միայն կաթողիկոսը կատարել, հստակորեն ասվում է Հովնան Գ Օձնեցու /717-728/ սահմանած կանոններում. «Պարտ և արժան է զսուրբ միւռոնն, այսինքն է՝ զիւղն անուշահոտութեան, հայրապետին աւրհնել»[2]:

Օձնեցուց մի քանի տասնամյակ անց Սիոն Ա կաթողիկոսի /767-775/ կամ Պարտավի ժողովի կանոնախմբում վերստին պատվիրվում է. «Եպիսկոպոսունք մի՛ իշխեսցեն միւռոն աւրհնել կամ յաւելուած առնել եւ տալ քահանայից, այլ ամ յամէ ի հայրապետանոցէն առցեն ըստ կանոնական հրամանի սուրբ հարց»[3]: Հատկանշական է նաև հետևյալ դեպքը: 10-րդ դարում, երբ Սյունյաց Հակոբ եպիսկոպոսը հրաժարվում է ենթարկվել Անանիա Ա Մոկացի /946-968/ կաթողիկոսին, այնուամենայնիվ, չի համարձակվում ինքը մյուռոն օրհնել, այլ այն բերում է Աղվանից կաթողիկոսությունից[4]: Այսինքն՝ չհնազանդվելով ժամանակի հայրապետին, այնուամենայնիվ, չի հանդգնում խախտել Հայ Եկեղեցու կողմից սրբագործված կարգը և մյուռոն օրհնել, այլ գործածում է թեկուզև Աղվանից, սակայն կաթողիկոսի ձեռքով օրհնվածը:

Ներսես Լամբրոնացին նա «Խորհրդածութիւնք ի կարգ եկեղեցւոյ» աշխատանքում մյուռոնի օրհնությունը Հայ Եկեղեցում վերապահում է բացառապես կաթողիկոսին: Ներկայացնելով հոգևոր դասի տարբեր աստիճանների ունեցած իրավասությունները, կաթողիկոսի համար էլ գրում է. «Ընդ ամենայն տեղիս՝ ուր ազգքն իւր և համացեղք են, ունի իշխանութիւն ձեռնադրել նոցա եպիսկոպոս և տալ զմիւռոնն, վասն այնորիկ անուա՞ի և կաթողիկոս»[5]:

Հայ ժողովուրդը, լինելով աշխարհում բոլորից շատ ցրված քրիստոնյա ազգը և չունենալով միասնական քաղաքական կենտրոն, այն փոխարինում է Հայ Եկեղեցիով՝ աշխարհասփյուռ հայությանը միավորող հոգևոր շաղախ համարելով սրբալույս մյուռոնը, որը կաթողիկոսանիստ կենտրոնից օրհնվում և տարածվում էր ձեռամբ հայոց ընդհանրական Հայրապետի: Մեր եկեղեցական պատմության նոր շրջանի ամենապայծառ հոգևորականներից Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանի խորունկ բնորոշմամբ. «Մեզանում, հայրապետական իշխանությունն սկզբից ևեթ այնպիսի կենտրոնացնող ուժ ուներ և մանավանդ քաղաքական իշխանության անկումից հետո այնպիսի հեղինակություն ստացավ ամբողջ ազգության աչքում, որ Ս. Մյուռոնի մեջ մարմնացող շնորհաբաշխության իրավունքը՝ իբրև հոգևոր կոչման բարձրագույն արտոնություն, ընտինքյան պետք է կենտրոնանար հանձին հայրապետի»[6]:

Մյուռոնի օրհնության կանոնը՝ «Կանոն օրհնութեան սրբալոյս մեռոնին» ավանդվել է Հայ Եկեղեցու «Մաշտոց» ծիսարանի միջոցով: Ընդլայնած պահպան-

---

2 *«Կանոնագիրք հայոց», աշխատասիրությամբ Վ. Հակոբյանի, հ. Ա. Երևան, 1964, էջ 519:*

3 *Նշված աշխատությունը, հ. Բ. Երևան, 1971, էջ 7:*

4 *Տե՛ս Արարատ, 1897, էջ 364:*

5 *Ներսես Լամբրոնացի, Խորհրդածութիւնք ի կարգ եկեղեցւոյ, Վենետիկ, 1847, էջ 89:*

6 *Կարապետ եպիսկոպոս, «Ս. Մյուռոնը», Էջմիածին, 1912, էջ 18:*

վել և մեզ են հասել մինչև 13-րդ դարը գրված մի քանի տասնյակ «Մաշտոցներ», սակայն նրանցում մյուռոնի օրհնության կանոնը բացակայում է. թեև օրհնության նկարագրությանը ինչպես ասացինք հանդիպում ենք դեռևս Ուխտանեսի պատմությունում: Այս իրողությունը բացատրվում է Հայ Եկեղեցու պատմության և հայ ձեռագրային աշխարհի մի քանի յուրահատկություններով:

Ըստ «Մաշտոց» ծիսարանի Կաթողիկոսին վերապահված կանոնները երեքն են՝ մյուռոնի օրհնություն, եպիսկոպոսական ձեռնադրություն և թագավորի օրհնություն: Այս երեք կանոնները, ինչպես նաև կաթողիկոսի ձեռնադրման և օծման կանոնը ի մի գումարվելով, կազմում են կաթողիկոսական «Մաշտոցը»: Հիշյալ կանոնները բավականին քիչ են հանդիպում հատկապես մինչև 15-րդ դարի կեսը գրված ձեռագրերում, որը բացատրվում է հոգևոր խորհրդաբանական և ազգային-քաղաքական պատճառներով:

Հոգևոր առումով մյուռոնի խորհուրդը ծածկյալ խորհուրդ էր համարվում վերապահված կաթողիկոսին և օրհնությանը մասնակցող բարձրաստիճան հոգևորականներին: Նույնը վերաբերում է և կաթողիկոսական ձեռնադրությանն ու օծմանը: Հոգևոր այս խորհրդից առավել ազգային-քաղաքական շեշտված պատճառներ կային կաթողիկոսական ձեռնադրման ու մյուռոնի օրհնության կանոնները կաթողիկոսարանում առանձին և անգամ ծածուկ պահելու: Սկսյալ չորրորդ և հատկապես հինգերորդ դարից, բյուզանդական կայսրերն ու պարսից թագավորները, այնուհետև նաև Հայաստանին տիրող մյուս ուժերը փորձել են ուժով և բռնությամբ Լուսավորչի գահին նստեցնել իրենց հաճո և ընդունելի անարժան որևէ մեկին, կամ էլ հակաթոռ մի որևէ կաթողիկոսություն հաստատել:

Երկու պարագայում էլ, որպեսզի կաթողիկոս ընտրելը չսահմանափակվի միայն պարզ ընտրությամբ, քրիստոնյա աշխարհում ընդունված սարկավագական, քահանայական ու եպիսկոպոսական ձեռնադրությանը զուգահեռ մեր եկեղեցին սահմանել է նաև կաթողիկոսական ձեռնադրության կանոնը: Որոշակի ծես և որոշյալ թվով եպիսկոպոսներ պահանջող այս կանոնը մեծապես օգնում էր անվավեր համարելու արտաքին ուժային միջամտությամբ որևէ մեկին հայոց կաթողիկոսության գահին նստեցնելու փորձերը, ինչպես նաև առանձնահատուկ կերպով շեշտում էր Հայ Եկեղեցու և հայ ժողովրդի համար հայոց հայրապետի ունեցած դիրքն ու աստիճանի կարևորությունը և ազգային նվիրականությունը:

Նույն կերպ մյուռոնի օրհնության կանոնն է առանձին պահվել, որպեսզի նախ որևէ եպիսկոպոս կամ քահանա չհանդգնի օրհնել այն, ինչպես մի քանի անգամ զգուշացվում է «Կանոնագիրք Հայոց»-ում զետեղված կանոններում, ինչպես նաև հակաթոռ կամ բռնությամբ կաթողիկոս կարգված մեկը նման փորձ չկատարի, այլ այն օրհնի միայն օրինապես ընտրված և Հայ Եկեղեցու ծեսով ձեռնադրված ու օծված կաթողիկոսը:

Ահա թե՛ այս և թե՛ հազվադեպ՝ ընտրությունից ընտրություն և օրհնությունից օրհնություն միայն գործածվելու, ինչպես նաև զգուշության ու կաթողիկոսարանից դուրս չկիրառվելու պատճառով, դրանք չեն ընդգրկվել «Մաշտոց» ծիսարանի մյուս կանոնների շարքում:

Այս առումով հատկանշական է Վենետիկի Մխիթարյանների Ժ դարի ընտիր և ծավալուն «Մաշտոցը», որի 30-րդ կանոնը նվիրված է մյուռոնի օրհնությանը՝

«Կանոն խորհրդածութեան սուրբ իւղոյն /ստ. լուս. վրա «Միւռոն աւրհնելու»/, զոր միռոն կոչեն»[7]:

Կանոնի անվանումից հետո, սակայն, ընդօրինակողը բուն կանոնը բերելու փոխարեն գրում է «Բայց մեք ոչ իշխեմք գրել զի մի՛ անհնազանդ գտանիցիմք Սուրբ Լուսաւորչի աթոռոյն և մեծի հայրապետին մերոյ»[8]: Այսինքն՝ գրիչը չի համարձակվում ընդօրինակել, քանի որ այն փաստորեն փակ կանոն էր, որը անտեսել, կնշանակեր անհնազանդ գտնվել հայոց հայրապետի կամքին: Հատկանշական է, որ գրիչը չի գրում իր ժամանակի կաթողիկոսի անունը, այլ ասում է հայրապետին, այսինքն՝ այս կանոնի ընդօրինակումը ավանդաբար դեմ է եղել հայոց հայրապետների կամքին: Մյուռոնի օրհնության կարգը առանձին պահելու եկեղեցական ավանդույթը այնքան ուժեղ էր, որ այն ծնող ազգային-քաղաքական ու եկեղեցա-իրավական նախադրյալների վերացումից դարեր անց էլ 1876 թ. Գևորգ Դ Մեծագործ կաթողիկոսը այս կանոնը տպագրեց սահմանափակ քանակով և հատուկ կարգադրեց, որ այն պահվի միայն Մայր Աթոռում:

Մյուռոնի օրհնության կանոն ունեցող առայժմ հայտնի ամենահնագույն ձեռագիրը՝ Կիլիկիո կաթողիկոսարանի Մայր Մաշտոցն է՝ ընդօրինակված Կոստանդին կաթողիկոսի հրամանով 1311 թվականից առաջ՝ Ներսես Լամբրոնացու ձեռքով գրված օրինակից: Հատկանշական է, որ այս ձեռագիրը ևս կաթողիկոսական «Մաշտոց» է և պարունակում է միայն կաթողիկոսին վերապահված կանոնները, որը մեկ անգամ ևս վկայում է, թե այս շրջանում Մյուռոնի օրհնության և կաթողիկոսի ձեռնադրության կանոնները գլխավորաբար զետեղվել են միայն կաթողիկոսական «Մաշտոցներում»՝ հիշյալ չորս կանոնների շարքում:

Ներսես Լամբրոնացին էլ, որոշակի խմբագրման և հավելման ենթարկելով հանդերձ «Մաշտոց» ծիսարանը, մյուռոնի օրհնության պարագայում ևս որպես հիմք անշուշտ ունեցել է մեկ այլ ավելի հին և ընտիր ձեռագիր: Մխիթարյան հայրերից Վարդան Հացունու բնորոշմամբ, Տարսոնի եպիսկոպոսի՝ Ներսես Լամբրոնացու ձեռքով գրված այս «Մաշտոցը» քննելիս «եթե ուշադրությամբ նայինք յուր բովանդակության, անոր աղոթից մեջ պիտի նշմարենք հայերեն լեզվի հնագույն դրոշմ մը քան զԼամբրոնացին», և այդ հնագույն դրոշմը հասցնում է մինչև Թ դար[9]:

ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Օրհնության սկզբում նախ եպիսկոպոսները ընթերցում են աստվածաշնչային տարբեր հատվածներ, որոնց հաջորդում են նորերը՝ օրհնության հետագա ընթացքում: Այս ընթերցվածները նվիրված են ձիթենուն, օծության սուրբ յուղին, նրա պատրաստությանը, հոգևոր ու մաքրագործող շնորհին ու գործածությանը: Այնուհետև հատուկ աղոթքներ է կարդում Վեհափառ Հայրապետը, որոնցով հայցում է, որ Ս. Հոգին հանգչի այս յուղի մեջ և սրբացնի այն, որպեսզի նրանով օծվածներն ստանան Սուրբ Հոգու շնորհը:

Այս շարքը սկսվում է «Աստուած, որ տուիչդ ես ամենայն բարութեանց» աղոթքով, որում Վեհափառը խնդրում է, որ Ամենակալն Աստված հաճի ընդունել «զխունկ զայս ի հոտ անուշից և ի բուրումն քաղցրութեան», և Սուրբ Հոգու

---

[7] *Մայր Ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. Գ, Վենետիկ, 1966, էջ 35:*

[8] *Նույն տեղում:*

[9] *Վարդան Հացունի, Կաթողիկոսական ընտրություն ... տնադրություն պատմության մեջ, Վենետիկ, 1930, էջ 129:*

շնորհները առաքի, որ արժանավորությամբ կատարվի մեռոնի օրհնությունը «զոր քահանայագործեմք հրամանաւ» ք.. սուրբ առաքյալների:

«Աստուած հարց և Տէր ողորմութեան» աղոթքում էլ Մյուռոնի գլխավոր բաղադրանյութի՝ ձիթենու համար, աստվածային ողորմությունն է հայցվում. «Առաքեա զպարարտութիւն ողորմութեան քո ի պտուղ ձիթենւոյս այսորիկ»:

Հաջորդ «Սուրբդ սրբոց և ամենայն սրբութեանց տուիչ» աղոթքում հիշվում է, թե ինչպես Մովսեսը օծման համար Աստծո պատվերով յուղ պատրաստեց և ասվում է, որ Սուրբ Հոգին գա և հանգչի նաև այս յուղի մեջ և սրբագործի այն:

«Տէր Աստուած, որ մեծդ ես և սքանչելի ի փառս քո» աղոթքում էլ Հայրապետը խնդրում է, որ Հիսուսի արյամբ գնված ժողովրդին օծելու համար պատրաստված յուղը լինի սրբության նշանակ և Սուրբ Հոգու զորությամբ յուղն այս դառնա յուղ ցնծության և զգեստ լուսավոր:

Օծման յուղի միջոցով քրիստոնյային իր հավատում հաստատուն պահելու կարևորությունն է շեշտվում «Դարձյալ մատուցանեմք քեզ թագաւոր յաւիտենական» աղոթքում:

Այնուհետև, Աստվածաշնչային մի քանի ընթերցվածներից հետո հնչում է մյուռոնօրհնության «Որ յառաջագոյն յօրէնս...» շարականը, որում, «Երգ Երգոցի» հետևողությամբ, Քրիստոսն անվանվում է «իւղ թափեալ» և ասվում է, թե քո աստվածությունը որպես յուղ թափեցիր երկնքից և նրանով օծեցիր մարդկային բնությունը՝ միավորվելով նրա հետ և նույն կերպ դիմվում է Փրկչին, որ Երկնային Իր շնորհը հեղի այս յուղի մեջ: Նույն խնդրանքն է կրկնվում նաև «Հայր Ամենակալ» սկսվածքով մյուռոնօրհնության մնեղեդիում:

Աստվածաշնչային նոր ընթերցվածներին հաջորդում է Ներսես Շնորհալու «Նոր օրհնութիւն ընդ հայցուածոց մաղթանաց» քարոզը, որից հետո կարդացվում է «Տէր ողորմութեան, Հայր լուսոյ և աղբիւր ամենայն բարութեանց» աղոթքը, ապա Հայրապետը կատարում է մյուռոնի նյութի երդմնեցությունը՝ «երդմնեցուցանեմ զքեզ նիւթ ձիթոյ», ասելով, որ եթե քո մեջ կա սատանայի և չարության ներգործությունը, այն ամբողջովին թող հեռանա քեզնից, որպեսզի օրհնությամբ զորացնես օծյալին, նրա մեջ տպավորելով /դրոշմելով/ Սուրբ Հոգին՝ հանուն Հոր Ամենակարողի և Որդու՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի:

Ձիթենու յուղի երդմնեցմանը հաջորդող աղոթքը նվիրված է «սաղարթազուարթ» ձիթենուն, որը ուրախության պտուղ է ըստ սաղմոսերգուի՝ Դավիթ մարգարեի: Հիշվում է Նոյի ուղարկած աղավնու բերած ձիթենու ճյուղը: Ասվում է, որ ինչպես ջրհեղեղը սրբեց աշխարհի մեղքերը և ինչպես ջրհեղեղից հետո աստվածային հաշտության նշանը ձիթենու ճյուղը եղավ, այնպես էլ մկրտության ժամանակ նույն ձիթենին է մյուռոնում, որ օծությամբ «զուարթացուցանէ զհոգիս»:

«Սուրբ անուան» սկսվածքով աղոթքում էլ Հին Ուխտի բոլոր օծությունների և սրբությունների այլաբանական խորհուրդների թվարկմամբ մեկ անգամ ևս շեշտվում է մեռոնի դերն ու նշանակությունը:

Օրհնվող յուղը, Սուրբ Հոգու շնորհներով պատելու հայրապետական աղոթք – հայցվածներից հետո, «լինի բացումն կափարչի կաթսայի մեռոնին»:

Մայր Աթոռի լուսարարապետը բացում է Ս. Մեռոնի կաթսայի կափարիչը և դպիրները երգում են «Բացեր Տէր այսօր զգաւնդ երկնային» շարականը և երկնային շնորհները կրող բացված այս գանձի մեջ հայրապետը նախ լցնում է ծաղիկների նյութերը, ապա բալասանը և այնուհետև գալիս է Մյուռոնի օրհնության ամենախորհրդավոր պահը: Մյուռոնաթափ աղավնիով վեհափառը հին մյուռոնն է լցնում նորի մեջ: ԺԱ դարի մատենագիր Անանիա Սանահնեցու

բնորոշմամբ, երբ հին մյուռոնը խառնվում է նորին, հնի մեջ եղող սրբալույս շնորհը փոխանցվում է նորին:

Քանի որ մյուռոնի միջոցով խորհրդաբար փոխանցվում են Ս. Հոգու շնորհները և որոնք օրհնվող նոր մյուռոնին են խառնվում հնի հեղմամբ, այն պահին, երբ լցվում է հինը, ղողանջում են Մայր Տաճարի զանգերը, «զի լիցի դղրդումն»: Այսինքն՝ ինչպես երբ Հոգեգալստյան ժամանակ վերնատանը հավաքված առաքյալների վրա իջավ Սուրբ Հոգին և «հանկարծակի երկնքից հնչեց մի ձայն» (ԳՈՐԾՔ Բ 2), այնպես էլ հին մյուռոնի լցման պահին օրհնվող նոր մյուռոնի Ս. Հոգու շնորհներով պատելն է խորհրդանշում զանգերի այս ղողանջումը:

Քանի որ Մյուռոնը Սուրբ Հոգու շնորհների նշանակն է և Ս. Հոգին Հորդանանում մկրտության ժամանակ աղավնաձև իջավ, եկեղեցական հանդիսավոր արարողությունների ընթացքում մյուռոնը լցվում է աղավնաձև պատրաստված հատուկ անոթների մեջ, որոնք Մյուռոնաթափ աղավնի են կոչվում և ունեն թևատարած աղավնու ձև:

Աղավնու Ս. Հոգուն խորհրդանշելու համար է նաև, որ հին մյուռոնը նորին խառնելիս Վեհափառը երգում է «Առաքելոյ Աղաւնոյ» շարականը:

Գրիգոր Նարեկացին իր անմահ Մատյանում Սրբալույս Մյուռոնին նվիրված գլխում գրում է, թե այս խնկելի, պաշտելի և երանելի յուղը մարդուն որևէ օգուտ, շնորհ չի տա, եթե չտյառնագրվի տերունական կենսատու խաչով: Եվ հին մեռոնը խառնելով նորի հետ, Վեհափառ Հայրապետն այնուհետև հաջորդաբար այն տյառնագրում և խառնում է Հայ Եկեղեցու ավանդական երեք գլխավոր սրբություններով՝ Կենաց փայտով, Աստվածամուխ Ս. Գեղարդով և Գրիգոր Լուսավորչի Աջով, երգելով «Օրհնեսցի և սրբեսցի Միւռոնս այս նշանաւ...», որից հետո և ամեն անգամ հիշատակվում է այս երեք սրբություններից մեկը, որով տյառնագրվում և խառնվում է մյուռոնը:

Մյուռոնի պաշտամունքն ունեցող մեր ժողովուրդը Ս. Հոգու շնորհների փոխանցման նյութական դրսևորումն է համարում այն պահը, երբ հին մյուռոնը լցվում է նորի մեջ և տյառնագրվում ու խառնվում Լուսավորչի Աջով, որից հետո, ըստ ժողովրդական ըմբռնման, մյուռոնը սկսում է եռալ և կաթսան տաքանալ: Դարեր շարունակ բազում արգելքներ ու վտանգներ հաղթահարելով՝ Մայր Աթոռ հասած ուխտավորների ջերմ փափագն է եղել Մյուռոնի կաթսան այդպես տաք-տաք համբուրելը:

ՍՐԲԱԼՈՒՅՍ ՄՅՈՒՌՈՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԸ

Գարեգին Ա Վեհափառ Հայրապետի բնորոշմամբ «Հայց. եկեղեցւոյ միւռոնը հայութեան կնի՛ք է դարձած՝ ըլլալէ ետք կնիքը Ս. Հոգւոյն: Միւռոնով պայծառացած ճակատին համար կ՚ըսենք. «հայո՛ւ ճակատ». միւռոնուած մանուկի համար կ՚ըսենք. «հայո՛ւ որդի». երբ մկրտութենէն անմիջապէս ետք երեխան դրոշմի օծումն ընդունի իր ճակատին՝ կ՚ըսենք. «անա հիմա հայացաւ»[10]:

Մյուռոնն այնքան նվիրական և սրբագործող համարում է ունեցել, որ երեխայի կնքելու բուն եկեղեցական խորհրդին զուգահեռ ժողովուրդը կատարել է և իր արարողությունները, որոնք դարերով հարատևել են հայկական լեռնաշխարհի ազգագրական տարբեր հատվածներում:

Մկրտության ժամանակ երեխային հագցվող զգեստը կոչվել է «մեռոն լաթ»[11]: Այսինքն՝ մկրտության խորհրդում առանձնացվել և շեշտվել է հենց

---

10 *Գարեգին Բ Կաթողիկոս, Հող, մարդ եւ գիր, Անթիլիաս, 1991, էջ 170:*

11 *Տե՛ս Կ. Գաբիկյան, Բառգիրք սեբաստահայ գավառաբարբառի, Երուսաղեմ, 1952, էջ 399:*

մյուռոնի գաղափարը: Եթե քրիստոնեական խորհրդաբանությամբ մկրտությունը մայրական արգանդից մարմնավոր ծնունդին հաջորդող հոգևոր ծնունդն է եկեղեցու ավազանից, ապա հայ մարդու համար այն նախ եղել է երեխայի կնքվելը մյուռոնով: Երվանդ Լալայանի վկայությամբ Արցախի Վարանդայի գավառում մինչ եկեղեցում կատարվում էր մկրտությունը, երեխայի մանկաբարձը (տատմերը), մկրտության ավազանից մի փոքրիկ շշով մյուռոնաջուր վերցրած, շտապում է տուն, նրանով լվանում ծննդկանի՝ մոր, ձեռքերը, որպեսզի մյուռոնաջրով մաքրված ձեռքերով գրկի մյուռոնով կնքված իր մանկանը[12]:

Տարածված հաջորդ արտահայտությունը և սովորությունը մեռոնահան անելն է: Տարբեր բարբառներում տարբեր կերպ է այն կոչվել. Սեբաստիայում՝ մեռոնեն հանի, Գանձակում՝ մեռոնը վեր հանել, մի շարք այլ վայրերում՝ մեռոնջրեն հանել և այսպես շարունակ[13]:

Մեռոնահան է անվանվում մկրտությունից հետո երեխային առաջին անգամ լողացնելը: Երեխան, եթե տղա է, լողացնում են երեք, իսկ եթե աղջիկ է՝ յոթը օր հետո: Այս մի քանի օրը երեխային չեն լողացնում, որպեսզի մյուռոնը մարմինը լավ պատի. «աղեկ մը անցնի»: Աղջկան յոթը օր հետո են լողացնում, որ ամաչկոտ և պարկեշտ լինի՝ մյուռոնը երեսին շատ մնա: Այս պատճառով էլ որևէ աղջկա հետագայում, նրա ազատ պահվածքի համար մեղադրելիս, ասում են, թե այնքան է համբուրվել, որ երեսի մեռոնը լուծվել, գնացել է:

Ի տարբերություն աղջկա, տղային ավելի շուտ են լողացնում, որ «ճակտով ըլլի չամնչէ»[14]: Երեխային լողացնելու ջուրն էլ կոչվում է մեռոնաջուր, քանի որ այդ ջուրն առաջին անգամ է շփվում երեխայի մյուռոնված տեղերին: Մյուռոնի հետևողությամբ որոշակի զորություն է վերագրվում և այս ջրին: Անթույլատրելի է համարվում այն պարզապես թափելը, այլ լցնում են թոնիրը կամ օջախը, քանի որ ժողովրդական հավատքով սրբություններ են նաև այս երկուսը: Ծատ շրջաններում մեռոնջրին մաքրագործող հատկություն է վերագրվել. կամ առանձին շշով պահել են և նրանով ցողել այն ամանները, որոնք շունն ու կատուն են լիզել, ինչպես նաև եթե մեջը մուկ է ընկել ու որևէ անմաքուր բան է թափվել, կամ էլ շաղախել են հողով և այդ հողով շփել: Հատկաշնական է նաև, որ մեռոնջուրը սովորական հողին չեն խառնել, այլ հանքային որևէ բաղադրություն պարունակող և գույնով ու բուժիչ հատկությամբ առանձնացող և ժողովրդի կողմից տարբեր հատկանիշներ վերագրվող հողին[15]:

---

12 *Տե՛ս Ազգագրական հանդես, հտ. Բ, Շուշի, 1897, էջ 125:*

13 *Տե՛ս Ազգագրական հանդես, հտ. Զ, Թիֆլիս, 1900, էջ 282:*

14 *Տե՛ս Ազգագրական հանդես, հտ. Ա, Շուշի, 1895, էջ 271:*

15 *Տե՛ս Կ. Գաբիկյան, Բառգիրք Սեբաստահայ գավառաբեզվի, Երուսաղեմ, 1952, էջ 400:*